ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԻՆՈՅԱՆ Դ. Ֆ.

Կիլիկիան XVI-XVIII դարերի ընթացքում հիմնականում գտնվում էր տարատեսակ թուրքմենական ցեղախմբերի ասպատակությունների ու տիրապետության պայմաններում: Մինչև 1517 թ. Կիլիկիան իրավական առումով Եգիպտական սուլթանության ներքո էր, իսկ դրանից հետո՝ Օսմանյան կայսրության կազմի մեջ: Այնուամենայնիվ, հատկապես օսմանյան իշխանությունը շատ հաճախ կրում էր ուղղակիորեն ձևական բնույթ: Իրական իշխանությունը երկրամասում շարունակում էր մնալ տարատեսակ ցեղախմբերի՝ Զուլգատրյանների, Կարամանյանների, Ռամազանյանների, ավելի ուշ ջալալիների, ինչպես նաև տարատեսակ ավազակախմբերի իշխանության ներքո: Օսմանյան իշխանությունները հաճախ չէին էլ միջամտում այստեղ ընթացող գործընթացներին՝ բավարարվելով ուղղակիորեն իրենց իշխանության ընդունման փաստով: Դրան զուգահեռ՝ հարկ է նշել, որ, ի տարբերություն Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող հայապատկան այլ տարածքների բնակչության, Կիլիկիայի հայ բնակչությունը վերոգրյալ ժամանակաշրջանում աչքի ընկավ նաև քաղաքական ու համայնքային կազմակերպման առավել բարձր մակարդակով: Սա, անշուշտ, ուներ իր հիմնավոր պատճառները. նախ պետականությունը, ինչպես նաև պետական մտածողությունը միջնադարում այստեղ գոյություն են ունեցել առավել երկար, քան բուն Մեծ Հայքի տարածքում: Եթե հաշվի առնենք նաև երկրամասի լեռնային հատվածում (մինչև 1424 թ.) Կոստանդինի իշխանավարման փաստը, ապա կարող ենք փաստել Կիլիկիայում պետականության այս կամ այն կերպի մոտ երեքնկես հարյուրամյակ գոյության մասին: Սրան է գումարվում նաև պետական կառույցների առավել բնույթը: Ի տարբերություն բուն Մեծ Հայքի տարածքի՝ Կիլիկիայում պետական կառույցների ձևավորման գործընթացում հիմնային հայկական շերտի առկայության պայմաններում առկա են եղել և՛ բյուզանդական, և՛ արևմտաեվրոպական, և՛ իր տարատեսակներով արևելյան պետականաշինության ավանդույթներ: Խիստ կարևոր էր նաև հայկական այս պետականության միջազգային ճանաչում ունենալու հանգամանքը: Ի տարբերություն Բագրատունյաց շրջանի հայկական պետությունների տիրակալների՝ կիլիկյան տիրակալները միջազգային իրավունքի կողմից ընդունվել են որպես ինքնիշխան սուբյեկտներ: Թե որքան մեծ է եղել « հայոց թագավոր» եզրի իրավական արժեքը, նկատելի է նույնիսկ այն պարզ իրողությունից, որ պետության անկումից դարեր անց անգամ այն օգտագործվում էր որպես կիպրոսյան, ապա սավոյան տիրակալների կողմից: Ուստի և պատահական չէ, որ անգամ XVII դարում, իսկ որոշ դեպքերում առավել ուշ շրջանում ևս Կիլիկիայում մենք հանդիպում ենք աշխարհիկ իշխանության հա-

մակարգի տարատեսակ դրսևորումների առկայության: Այդուհանդերձ, այդ համակարգը վերոգրյալ շրջանում դասական առումով աշխարհիկ իշխանական համակարգ չէր: Այն առավել շատ այդ համակարգի մնացորդային, նվազող, անկում ապրող դրսևորում էր: Սակայն դա ևս մեկ անգամ վկայում է կիլիկիահայության շրջանում արմատ ձգած պետականության ավանդույթների մասին: Անշուշտ, պետականությանը կործանարար հարված հասցվեց 1375, 1402-1404 և 1424 թվականներին: Այդ իրադարձություններից հետո թվում էր, թե աշխարհիկ իշխանությունն անգամ մնացորդային տարբերակով գոյություն չի ունենա: Սակայն կարճ ժամանակ անց 1467 թվագրվող հիշատակարանում կարդում ենք. «Ի մեծ թուին Հայոց ՋԺԶ (1467) ի բազմանալ մեղաց մարդկան և յազգմանէ չարին, Տուլղարցի ոմն Շահ-Սուար անուն՝ եղեալ հակառակ Մսրայ սուլտանին.... Եվ յետ այսր ամենայնի խորհեցաւ չարութիւն Սըսոյ քաղաքին և բերդին, ուստի բազում հեծելազօրօք խաղաց ի վերայ նորա ի յունիսի երկրորդ օրին, և հրկէզ արարեալ՝ անցեալ գնաց»[1]: Այդուհետ հիշատակագիրը շարունակում է, թե ինչպես Շահ-Սուարը գրավեց Ադանան, Տարսոնը, Այասը, Անարզաբան, Կովառնան, Պաղրասը, Այնթապը, Լևոնի բերդը, Կոպիտառն ու Բարձրբերդը՝ զավառով հանդերձ: Կիլիկիայում գրավումներ կատարելուց հետո Շահ-Սուարը ներխուժում է Ասորիք, հասնում է մինչև Հալեպ և կրկին վերադառնում Կիլիկիա. « ...և դարձաւ մռնռալով ի վերայ բերդին Սըսայ, և այրեաց, և Չագամ պարոն կայր ի բերդնէ պատերազմ արարին քրիստոնեիքն ի բերդէն, շատ տաճիկ (մարտիկ) սպանին, բայց աւելի տագնապելով տուաք զբերդն ի դեկտեմբերի երեք»[2]: Դատելով վերոշարադրյալից՝ կարելի է ենթադրել, որ Չագամ պարոնը հայ աշխարհիկ իշխանության կրողներից մեկն է եղել Սսում, քանզի ակնհայտ է, որ քաղաքի պաշտպանությունը կազմակերպել են հայերը. Սսի քրիստոնյաների մասին հիշատակումը այլ կարծիք չի ենթադրում: Եվս մեկ դար անց Կիլիկիայում կրկին հանդիպում ենք հայ աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների: Ըստ սկզբնաղբյուրների՝ 1585 թ. ապրիլի 10-ին Կիլիկիո Ազարիա կաթողիկոսը պապին է ուղարկում նամակ: Կաթողիկոսը, օրինակներ բերելով պատմությունից, պատրաստակամություն է հայտնում ընդունելու բոլոր տեսակի դավանաբանական տարաձայնությունները: Ապա և տեղի հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները կաթողիկոսի խոսքերը հաստատում են և խնդրում նրանից. « ...հաստատեսցէ ի մեզ զասացեալ Ազարիա վարդապետ մեզ կաթողիկոս, եւ զի տուեալ լիցին իւրեան զամենայն իշխանութիւն եւ զշնորհս, որ սահմանք է տալ այլոց կաթողիկոսաց»: Նամակը կազմվել է Հալեպում, որտեղ և ամենայն հավանականությամբ պապին պատասխան տալու համար հրավիրվել էր փոքրիկ հոգևոր ժողով: Կաթողիկոսի և իրենց խոսքերը հաստատել և կնքել են Աշոտու եպիսկոպոս Մարտիրոսը, Զեյթունի եպիսկոպոս Հովհաննեսը, Հալեպի եպիսկո-

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (կազմող՝ Լ.Խաչինյան), Ե., 1958, էջ 273:

[2] Նույն տեղում:

պոս Ղազարը, ապա հաջորդում են Սսո Մրսըր շահ աթոռակալ իշխանի, Սսո Լիպարիտ աթոռակալ իշխանի, Յանուշ (Յանուս) աթոռակալ իշխանի, Սսո իշխան Մղտսի Պուտախդարիպ ադայի և տեր Հովհաննես Հալեպցու ստորագրությունները[3]: Այս փաստաթուղթը վկայում է, որ անգամ XVI դարավերջին Կիլիկիայում, մասնավորապես Սիսում, դեռևս պահպանվել էին հայկական իշխանական տների ներկայությունն ու ազդեցության մի հատվածը: Ալիշանը ևս, նշելով այս նամակի մասին, տալիս է այդ իշխանների անունները՝ միաժամանակ համեմատություն անցկացնելով նրանց և Զեյթունի հայկական չորս իշխանական տների միջև[4]: Լեհաստանում գրված 1703 թ. ձեռագրում, ինչպես նաև Կղեմես Գալանոսի մոտ[5], որպես Ազարիայի խոսքերը հաստատողներ, հիշատակվում են միայն «…ի չորից եպիսկոպոսաց իւրոց, ի Յոհաննիսի եպիսկոպոսէ Զեյթունոյ, ի Մարտիրոսե եպիսկոպոսէ Աշոցի, ի Յոհաննիսի եպիսկոպոսի Հալպայ, եւ ի Մինասայ եպիսկոպոսէ Սեբաստիոյ»[6]: Ինչպես երևում է, հեղինակների մոտ էականորեն տարբերվում է ժողովին մասնակից անձանց ցուցակը, ընդ որում կրկնվում են միայն Հովհաննես Զեյթունցու, Մարտիրոսի և Հովհաննես Հալեպցու անունները, որը, սակայն, Պալճյանի ձեռագրում հիշատակվում է որպես քահանա, իսկ ըստ Գալանոսի՝ եպիսկոպոս: Դժվար է այս հարցի կապակցությամբ եզրակացություններ անել: Այդուամենայնիվ, կարծում ենք, որ առավել հավանական կարող է լինել Պալճյանի հիշատակումը, որը, փաստորեն, ընդունելի է նաև Ղ. Ալիշանի համար: «Անշուշտ, սկսած արդեն XV դարասկզբից, Կիլիկիո կաթողիկոսությունը, հոգևոր իշխանության կրողը հանդիսանալուց բացի, իր գործառույթներում որոշակիորեն ներառեց նաև աշխարհիկ իշխանության տարրեր: Հետագա՝ XVI-XVIII դարերում, այդ միտումները, կապված ազնվականության դերի անկման հետ, էլ ավելի ուժեղացան: Դրան զուգահեռ՝ թեկուզև արտադրական հարաբերությունների անկման հետ, այդուհանդերձ, աշխարհիկ իշխանության առավել շատ տարրեր սկսեց յուրացնել առևտրական խավը: Այս ամենով հանդերձ՝ աշխարհիկ իշխանության կրողները ևս, թեկուզև փոքր չափով, այնուամենայնիվ, պահպանում էին ներկայությունը երկրի թե՛ հասարակական-քաղաքական և թե՛ հոգևոր կյանքում: Այսպես 1602 թ. թվագրվող հիշատակարանում պատմվում է Կ. Պոլսի պատրիարք Գրիգորի Կիլիկիա կատարված այցի մասին: 1602 թ. մայիսի 9-ին ժամանելով Վահկա բերդ՝ նա այստեղ է մնում մինչև հունիսի վերջ: « …Եւ ժողուեցան առ անարժանութիւնս իշխանազունքն և

[3] Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան Սիւնհոդոսի, գրեց Աղեքսանդր վ. Պալճեան, Վիէննա, 1878, էջ 313:

[4] Ղ. Ալիշան, Սիսուան եւ Լևոն Մեծագործ (այսուհետև՝ Սիսուան), Վենետիկ, 1885, էջ 229:

[5] Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, շարադրեալ ի յերկուս հատորս ի կարգէ Թէատինոսաց Կղէմէս վարդապետէ, երկրորդ հատորին մասն առաջին, Romae MDCLVIII (1658 թ.), էջ 173:

[6] Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց Ի Վիէննա, կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիէննա, 1895, էջ 111:

ամենայն գլխաւորք ժողովրդեան տանն Կիլիկիոյ և աղաչեցին, թէ վասն Աստուծոյ ուղիղ դատարան արա մեզ ըստ կանոնաց և ըստ հայրենի հրամանաց և աւանդութեանց տանս Հայոց»[7]: Այստեղ ուշադրության է արժանի «իշխանագունք և ամենայն գլխավորք ժողովրդեան» արտահայտությունը: Փաստորեն հիշատակագիրը հստակ տարանջատում է այսպես կոչված «երրորդ և առաջին դասերի» ներկայացուցիչներին: Իսկ հետագայում այդ տարանջատումն առավել աննկատ է դառնում: Հարկավ, հայ աշխարհիկ իշխանության մնացորդների ազդեցությունը առավել առարկայական էր Կիլիկիայի լեռնային շրջաններում. սրա վառ վկայությունն է 1606 թվագրվող հիշատակությունը. « Թվին ՌԾԵ(1606) ի արաց ամսոյ (21) ժողովեալ իշխանքն Բարձրբերդու հոգևոր նախանձ շարժեալ, որ ի պատահմանց չար աւազակաց և գողոց, և եկեալ ի գիշերի գողացան զանաւթք եկեղեցւոյն Բարձրբերդոյ որպէս և է գրեալ ի գուշտն Մաթիոսի աւետարանչին»: Այդուհետև նկարագրում է Բարձրբերդի Ավետարանի գնման հանգամանքները դրանից 15 տարի առաջ, երբ գողացված Ավետարանը 200 դուրուշով գնել էր Ադանայից տեր Ստեփանոսը: Այժմ արդեն Բարձրբերդի ավագանին դիմում է կաթողիկոսին՝ բերդի և ողջ գավառի յուրատեսակ սրբությունը հանդիսացող Ավետարանը վերադարձնելու խնդրանքով: « …Եվ խորհուրդ արարեալ միաբան ժողովուրդ մեծամեծաւքն և եկեալ ի տեառն տէր Յովաննէս կաթողիկոսն և ասացին « Հոգևոր տէր մեզ դատաստան արա և զմեր պապենի յիշատակն ի մեզ տուր»: Այսինքն՝ երկու կողմերն էլ «դատաստանի» խնդրանքով ժողովվում են Սսում և դիմում Հովհաննես Անթեպցի կաթողիկոսին: «Եւ եկեալ ի Բարձրբերթու յիշխանաց մի ոմն բարի և աստուածասէր, մեծահաւատ իշխան մի՝ Աստուածատուր անուն, և ասաց, թէ, «Հոգւոյս ես կառնեմ» և ետուր երկու հարիւր դուրիշ իւր հալալ ապրանացն»: Այնուհետև ներկայացնելով Ավետարանի հետգնումը՝ հիշատակարանի հեղինակը Աստվածատուրին հիշատակում է որպես իշխանաց իշխան պարոն խոջա Աստվածատուր[8]: Սա արդարև խոսում է այն մասին, որ նշված շրջանում Կիլիկիայում ևս լայն թափ էր ստացել հայկական աշխարհիկ իշխանության համակարգի մեջ ազնվականական տարրի փոխարեն առևտրական կապիտալի ներկայացուցիչների ներառումը: Ինչ խոսք, հիշատակագիրը պետք է ամեն կերպ, պատվելի եզրեր օգտագործելով, փառաբաներ Աստվածատուրին, ինչը նկատելի է հիշատակարանի հատկապես երկրորդ հատվածում: Սակայն, դրանով հանդերձ, նկատելի է մեկ այլ երևույթ ևս. Կիլիկիայում առևտրական կապիտալի կամ ընդհանրացված ասած՝ երրորդ դասի ներկայացուցչի՝ որպես իշխան ներկայանալը ևս խոսում է այն մասին, որ այստեղ պետականության և միջնադարում դրա կարևորագույն հիմնասյունը համարվող ազնվականության ավանդույթները դեռևս բավական հզոր էին: Սակայն չի բացառվում նաև

[7] *ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա (1601-1620) կազմող՝ Վ.Հակոբյան (այսուհետև՝ ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ), Ե., 1974, էջ 80:*

[8] *Նույն տեղում, էջ 228:*

Աստվածատուրի ազնվականական ծագումը ի սկզբանե, երբ նա որպես գործունեության ոլորտ նախընտրել էր առևտրական գործունեությունը: Հատկապես Մեծ Հայքում, սկսած դեռ XIII դարից, լայն թափ էր ստացել իշխանական տների ներկայացուցիչների սոցիալական՝ ընկերային կարգավիճակի փոփոխությունը: Ստեղծված քաղաքական, տնտեսական պայմաններում հայ իշխանական տների ներկայացուցիչները հարկադրված էին լինում անցնել հոգևոր ծառայության՝ այդ կերպ փորձելով փրկել իրենց ժառանգական կալվածքների մի մասը: Առավել փոքր ծավալներով տեղի ունեցավ նաև ազնվականության առևտրականացման գործընթաց ևս: Այս երկու երևույթները Մեծ Հայքի գավառների հետ նաև որոշ ժամանակ անց սկսեց նկատվել Կիլիկիայում: Ուստի և չի բացառվում Աստվածատուրի ազնվական ծագումը ևս: Երկու տարբերակն էլ, անշուշտ, խոսում են «առաջին դասի» ընկերային կարգավիճակի խորքային փոփոխության մասին: Դժվար է ասել, թե «Բարձրբերդի իշխաններ» արտահայտությամբ ինչ է նկատի ունեցել հիշատակագիրը: Էականն այս պարագայում այն մթնոլորտի առկայությունն էր, որտեղ աշխարհիկ իշխանություն ունենալու (թեկուզև տեղային) գաղափարը դեռևս կենսունակ էր: Այդուհանդերձ, հակված ենք այն տարբերակին, որ դրանք առավելապես եղել են առևտրական խավի ներկայացուցիչներ, որը երևում է մեկ այլ հիշատակագրի գրառման մեջ: Վերջինս, ի տարբերություն նախորդ հիշատակագրի, որպես ավետարանի գնորդ ներկայացնում է ոչ միայն Աստվածատուրին «…լուսաւոր հոգի Յովաննէս կաթողիկոսն ի յԱտանա կու հանդիպի, կառնէ սբ. Աւետարանս, կու տա ի Բարձրբերդու տօլաթվորացն»[9]: Ընդհանրապես կիլիկյան առևտրականները մինչ թագավորության անկումն էլ բավական հանրաճանաչ են եղել: Սակայն նաև պետականության կորուստը ստիպեց շատ առևտրական ընտանիքների տեղափոխվել Եվրոպա՝ զգալիորեն ընդլայնելով կիլիկյան առևտրական ներկայությունը միջերկրածովում: Այսօր էլ իտալական տարբեր քաղաքներում կիլիկեցի առևտրականներին պատկանող XVI դարի բազմաթիվ գերեզմաններ կան[10]: Իհարկե, պետք է շեշտել նաև, որ առևտրական խավը Կիլիկիայում, այդուհանդերձ, մի շարք հանգամանքների բերումով չկարողացավ ստեղծել այնպիսի համակարգ, որը պետք է հաջողվեր ձևավորել ջուղայեցի առևտրականներին: Առևտրական խավը սկսեց ավելի ու ավելի նկատելի դեր ունենալ երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

XVI դարավերջին և հատկապես XVII դարասկզբին Օսմանյան կայսրությունը բավական բարդ իրադրության առջև էր կանգնել: Ապստամբությունը Վալախիայում, այնուհետև Կիպրոսում և Լիբանանում, ինչպես նաև Սեֆյան Իրանի դեմ անհաջող ռազմական գործողությունները ծանր անդրադարձան կայսրության ռազմաքաղաքական իրադրության վրա: Բայց, անշուշտ, առավել դժվարին

[9] *Նույն տեղում, էջ 229:*
[10] *Միսռւան, էջ 229:*

կացության մեջ գցեցին ջալալիների բարձրացրած ապստամբությունները, որոնք որոշ դադարներով տևեցին մինչև 1620 թ. վերջը[11]:

*XVII դարասկիզբը կիլիկիահայության համար դժվարին ժամանակաշրջան էր ոչ միայն տեղի թուրքմենական ցեղերի կամայականությունների և օսմանյան իշխանությունների հարկային ու ընկերային բռնությունների, այլև ողջ Օսմանյան կայսրության հիմքերը խարխլած ջալալիների շարժման պատճառով: 1601 թ. Սիսը գրավում է Սաթրչի Լավանդը[12]. «Դարձեալ ի սոյն թվին (1601) թալնեաց և կողոպտեաց Լաւանդն՝ որ Սաթրչի կոչուի, զՍիս քաղաք Կիլիկեցւոյ»[13]: Փաստորեն, տարատեսակ թուրքմենական ցեղախմբերի ու ջալալիական ավազակախմբերի հետ Կիլիկիան տվյալ ժամանակաշրջանում ավարառության հարմար օբյեկտ էր նաև քրդական ցեղերի համար: Դատելով անվանումից՝ Սաթրչին եղել է քրդական այս ցեղի առաջնորդներից մեկը: Ընդ որում, պետք չէ առանձնացնել սրանց ջալալիներից, քանզի քրդական շատ ցեղեր, ինչպես օրինակ լևենդները, հաճախ ներառվում էին ջալալիական ռազմաջոկատների մեջ[14]: Վերոգրյալ իրադարձությունների մասին ահա թե ինչ է նշում Ղ. Ալիշանը. վերջինս, նախ հղելով նույն Ա.Դավրիժեցուն, Սսի գրավման թվական է նշում 1598 թ., ապա մեջբերում է Եփրեմ կաթողիկոսի հիշատակությունը. «Եկն ոմն Սատուրճի անուն՝ անթիւ և անհամար զօրօք յԱնթեպու… ի Սիս, սակս Սոխտայք անուանեալ ապստամբիցս, որոյ գլխաւորին անուն Մօհտի օղլու կոչիւր զոր բռնութեամբ խորհէր տիրել քաղաքիս Սսոյ, ուստի ի գալ Սատրճւոյն, եթող զքաղաքս և փախեաւ իսկ բնակիչք քաղաքիս ի բաց լքեալ զամենայն ստացուածս և զկարասի իւրեանց, միայն զձեռանէ որդւոյ և ընտանեայ կալեալ՝ փախեան և զերծան մազապուրծ»[15]: Փաստորեն, ըստ Ղ. Ալիշանի, մինչև Սաթրչիի գալը Սոխթա կոչվող ապստամբների առաջնորդը ցանկանում էր տիրել Սսին, որին, սակայն, անսպասելիորեն միջամտել է Սաթրչին: Վերջինս էլ է գրավել ու կողոպտել քաղաքը: Ինչ վերաբերում է Սոխթա անվամբ հիշատակվող ապստամբներին, ապա սրանք, ամենայն հավանականությամբ, ջալալի ավազակախմբերից մեկն էին ներկայացնում: Փաստորեն, Սիսը վերածվել էր պայքարի թատերաբեմի քրդական ու ջալալիական ավազակախմբերի համար: Նույն Սաթրչիի արշավանքի վերաբերյալ Մ. Չամչյանը նշում է. «Այլ մինչև էր սփռեալ ելուզակաց ի Հայաստան, մին ի նոցանէ՝ որոյ անուն էր սաթրճի Լէվէնտ՝ յաւարի էառ զՍիս քաղաք Կիլիկիոյ, և կողոպտեաց զկաթողիկոսարան, ընդ որ տխրեալ յոյժ Ազարիայ Ջուղաեցւոյ կաթուղիկոսն Սսոյ անկաւ հիւանդութիւն և մեռաւ յամի 1601 ՌԾ ի յու-**

---

[11] *Առավել մանրամասն ջալալիների շարժման վերաբերյալ տե՛ս* **Զուլալյան Մ.,** *Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ (այսուհետև՝ Ջալալիների շարժումը), Ե., 1966:*

[12] *Լևենդները քրդական ցեղ էին, տե՛ս Ջալալիների շարժումը, էջ 176:*

[13] **Առաքել Դավրիժեցի,** *Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի (այսուհետև՝ Առաքել Դավրիժեցի), Ե., 1990, էջ 477:*

[14] *Տե՛ս Ջալալիների շարժումը, էջ 176:*

[15] *Սիսուան, էջ 228-229:*

նիս»[16]: Ջալալիների շարժումը, անշուշտ, առավել մեծ ծավալի ավերածությունների ենթարկեց Արևմտյան Հայաստանը, բայց Կիլիկիայում ևս դրանց թողած « ժառանգությունը» զգալի էր: Ընդ որում, Կիլիկիան և կայսրության արևելյան գրեթե բոլոր նահանգները 1605-1608 թթ. ջալալիների անմիջական վերահսկողության ներքո էին[17]: Ջալալիների շարժման առավել աչքի ընկնող գործիչներից է եղել Թավիլը (հիշատակվում է նաև Թաւուլ և Դաւիլ ձևերով): Նրա ասպատակությունների աշխարհագրությունը ևս բավական մեծ է եղել՝ ընդգրկելով ինչպես Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանը, այնպես էլ Կիլիկիան, Սև ծովի հարավային ափերը: Թե որքան մեծ է եղել նրա իրական ազդեցությունը, ակնհայտ է նաև Ղուկաս հիշատակագրի վկայությունից. «Որ չար ժամանակիս նորոգել ետուր զսբ. Գիրքս ի ժամանակին չար և անաւրեն Տաւուլին»[18]: 1605 թ. Թավիլը ներխուժում է նաև Կիլիկիա: Սրապիոն Բաբերթացին այդ կապակցությամբ գրում է. « Որ և ի սոյն չարէն ապրստամբեալն, չարն և ժանդն տասնապատիկ քան զսա, պիղծ Թաւուլն, և եկեալ ԺՌ (10հզ.) հեծելօք ի յերկիրն Կիլիկեցոց և առեալ զԱտանայ, զԹարսիս, զՍիս, զՂարս և բազում աւեր էած և ԵՀ(500) արու մատաղ տղայք գերի տարաւ ի Ատանոյ»[19]: Թավիլը, ըստ Առաքել Դավրիժեցու, կենտրոնական իշխանության դեմ ապստամբություն էր բարձրացրել դեռ 1602 թ.[20]: Ընդ որում, վերջինիս ջոկատները ջախջախվել էին թուրքական կանոնավոր զորքերի կողմից արդեն 1603 թ., բայց մի քանի տարի անց կարողացել էին վերականգնվել: Թավիլի արշավանքի վերաբերյալ Ղ. Ալիշանը, նշելով վերջինիս կողմից Սիսը և Մամեստիան գրավելու մասին, մեջբերում է Եփրեմ կաթողիկոսի հիշատակությունը. «ելեալ ժամանէր յԱտանայ. որում ընդ առաջ ելեալ և մարտ մղեալ բնակիչք քաղաքին՝ ոչ կարացին զդէմ ունել այլ պատերազմելով ընդ միմեանս՝ մինչև եկեալ հասին՝ ի Կարմնճադուռն քաղաքին. և անդ զօրքն չարադէմ զազանին՝ մարտկոցս յարդարէին, և զդրօշս իւրեանց ի նմա հաստատէին և ի մէջ մարտկոցին ղօղեալ՝ արտաքուստ ի ներքս կապարճընկէց լինէին… բայց.. յետ բազում կոտորուածոց՝ յորում դիակունք մեռելոց իբրև զդերբուկս քարանց կուտեալ և դիզացեալ եղեն, էառ զքաղաքն, բայց յայն օր ոչ եմուտ ի քաղաքն գլխաւորք և մեծամեծք քաղաքին թողեալ զտունս և զստացուածս իւրեանց՝ փախեան և մտին ի բերդն: Իսկ ի յերկրորդում աւուր՝ որ էր աւագ երկուշաբթի՝ եմուտ ի քաղաքն և նստաւ ի նմա իբրև զսեպուհ տէր քաղաքին, և աւարտեաց զամենայն ինչս նորա. և ապա գինս եդ ի բերդն եղեալ քրիստոնէից. և յետ երեսուն աւուրց ելեալ գնաց»[21]: Փաստորեն ադանացիները համառ պաշտպանություն են կազմակերպել ջալալիական զորաբանակի դեմ, որն ի վերջո ավարտվել է քա-

[16] **Միքայել Չամչյանց,** *Հայոց Պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 536:*

[17] *Ջալալիների շարժումը, էջ 174-175:*

[18] *ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 238:*

[19] *Նույն տեղում, էջ 294:*

[20] **Առաքել Դավրիժեցի**, *էջ 477:*

[21] *Միսուան, էջ 260:*

դաքի գրավումով: Ադանայի գրավման ժամանակ քաղաքում է եղել նաև կաթողիկոս Հովհաննես Անթեպցին. «Նոյն ինքը Անթէպցին ալ կստիպեն Սսեցիք որ բերդ մտնէ, բայց սա չուզեր, այլ սուրբ Աջերուն և միւս սրբութիւններուն արկղը Աջապահ Միհ. Մինասին հետ կը դրկէ բերդը, և ինքն դուրսը կը մնայ մինչեւ գիշերուան առաջին պահը՝ շուարուն և լալագին, և օգտուելով Կամուրջի Դրան բացուելէն….. իր աշակերտներուն հետ կէլլէ Ատանայէն, և մոլար ճամբաներով կը հասնի իր աթոռը, Սիս»[22]: « Դաւիլի արշավանքը, ըստ Անթեպցիի տեղի կունենայ 1605-ին երբ ինքն…. Կը վերադառնայ Ատանա 1605-ի աւագ տօներուն և կը մնայ հոն»[23]: Դիտարկելով նաև Անթեպցիի ներկայացրած նյութը՝ ակնհայտ է, որ նկարագրական առումով երկու հաղորդումների մեջ տարբերություններ գրեթե չկան: Այսինքն՝ երկու անգամ Ադանան պաշարելու և գրավելու մասին խոսք լինել չի կարող: Արշավանքը տեղի է ունեցել 1605 թ., այն ժամանակ, երբ օսմանյան իշխանությունները դեռևս վճռական գործողությունների չէին անցել ջալալիների ապստամբական շարժումը ճնշելու հարցում: Այդ առումով կարելի է միանշանակ վստահել դեպքերի անմիջական ականատես Հովհաննես Անթեպցուն: Այդուհանդերձ, հիշատակություններից պարզ չի դառնում, թե ովքեր են ղեկավարում պաշտպանությունը՝ տեղի հայե՞րը, թե՞ տեղի օսմանյան վարչակազմի ներկայացուցիչները: Այնուամենայնիվ, հիշատակագրի դրական մոտեցումը հաշվի առնելով, կարելի է պնդել, որ քաղաքի պաշտպանությամբ առավելապես զբաղվել են հենց ադանացի հայերը տեղի վերնախավի գլխավորությամբ: Ասվածի վկայություն կարող է ծառայել նաև այն հանգամանքը, որ 1602 թ. կաթողիկոս ընտրելու համար հրավիրված ժողովը տեղի էր ունեցել Ադանայում, որտեղ, ըստ Հովհաննես Անթեպցու, հավաքվել էին «զիշխանսն կիլիկեցւոց»: Անշուշտ, սրանց, այսինքն՝ վերոգրյալ իշխանների մի զգալի մասը կարող էր ներկայացնել հենց Ադանա քաղաքը, և մի քանի տարի անց նրանք մասնակցություն պետք է ունեցած լինեին քաղաքի պաշտպանության կազմակերպման գործում:

«…յԱտանա մխիթարել զաթոռակալ քահանայսն եւ զիշխանսն Կիլիկեցւոց, որ աստ Ատանա ժողովեալ էին…. Ապա կուտեալ բոլոր բնակիչքն գաւառիս ի վերայ իմ թէ մի վասն Աստուծոյ առաջնորդ հայրենի աթոռոյ քո…»[24]: Ադանայի ժողովի ներկաներից Հովհաննեսը հիշատակում է Ադանայի Ստեփանոս, Զեյթունի Մկրտիչ և Հաճընի Սարգիս եպիսկոպոսներին: Ցավոք, նա որևէ կերպ չի հիշատակում ժողովին մասնակից աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների անունները[25]: Չնայած վկայությունների անհամապատասխանությանը՝ այդուհանդերձ, աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների ներկայու-

---

[22] *Միսուան, Յանկ Ժամանակագրական, էջ 561,* **Բաբգէն Կիւլէսէրեան,** *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը) (այսուհետև՝ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ), Անթիլիաս, 1990, սյուն 208-209:*

[23] *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 209:*

[24] *Նույն տեղում, սյուն 205:*

[25] *Նույն տեղում:*

թյունը Կիլիկիայի հոգևոր, հասարակական ու ընկերային փոխհարաբերություններում կասկած չի հարուցում:

Այս ամենը գալիս է վկայելու, որ անգամ XVII դարասկզբին, երբ երկիրը փաստացիորեն ջալալիական ավազակախմբերի ասպատակությունների դաշտում էր, Կիլիկիայում իրենց ներկայությունն էին ապահովում քաղաքական իրականության մեջ նվազ դեր ունեցող, սակայն դեռևս իրենց գոյությունը ապահովող հայ աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները:

АРМЯНСКАЯ СВЕТСКАЯ ВЛАСТЬ В КИЛИКИИ В ПЕРИОД ПОДЪ¨МА ДВИЖЕНИЯ ДЖАЛАЛИ

ТИНОЯН Д. Ф.

Резюме

В XVI – XVIII вв. Киликия подпала под власть различных туркменских племен. Реальная власть в стране находилась в руках таких племен и разбойничьих группировок, каковыми являлись рамазаниды, караманцы, а позднее – джалали и т. д. Османские власти довольствовались лишь фактом признания своего господства. Однако в рассматриваемый период в Киликии сохранялись элементы армянской светской власти.

ARMENIAN SECULAR POWER IN CILICIA AT THE BEGINNING OF THE 17TH CENTURY IN THE PEAK PERIOD OF JALALI MOVEMENTS

D. TINOYAN

Abstract

In the 16-18th centuries, Cilicia was under the power of diverse Turkmen tribes. The real power in the country was in the hands of numerous tribes and bands such as ramazadins, karamantses, later jalalis and others. The Ottoman authorities often did not take any steps and were satisfied only with the fact of recognition of their supremacy. Despite all these things, fragments of Armenian secular power kept their presence during the mentioned period. The evidence of the fragments of secular power in Cilicia dates back to late medieval period.